

Նայեց որ գործն ասով ևս չի բաւականանար, զի դրամական տագնապ կալ, իւր ձայնը մինչ ի Ա. Պօլիս բարձրացոյց առ Ազգային Պատրիարքարան, որուն համար հոգեւորդ Ս. Ներսէս Սրբազան Պատրիարքն յատենի ժողովրդեան կաղաղակէր մի իննայէք սիրելի ժողովուրդ, օգնութեան հասէք, վասն զի մեր հայրենի հողոյն վերայ Աստուածային տուն կը շինուի մեր օրով:

Եւ որ տւելի դժուարինն էր և անյուսալի ի յաջողել, ազդեցիկ միջոցաւ յաջողեց որ արեւմտեան կողմի պարիսպն 150 կանգուն տարածութեամբ սոյն միջոցիս մէջ շրջապտոյտ բարձրացաւ և աւարտեցաւ, որուն ծոց կարող պիտի լինի եկեղեցին պէտք եղած շէնքեր կառուցանել յապալս: Ուրեմն այսքան բարեաց պատճառ եղողը մի բարձր անձնաւորութեան ինչ բարձր շնորհակալութիւն մատուցանելու է, մենք կը տկարանանք, միայն թէ Տաճարի Տէր, անդրանկաց եկեղեցւոյ թագաւորն Քրիստոս, ինք լինի Նորին Սրբազնութեան վարձահատոյց:

Ապա ի ցոյց երախտագիտութեան թող պարծանօք կրէ Ս. Եկեղեցիս իւր բարձր ճակատին վերայ թէ՛

« Ի փառս միոյն Աստուծոյ վերակառուցաւ Արարուց Ս. Եկեղեցիս և շրջապատ պարսպաւ ընդարձակեցաւ անխոնջ ջանիւք Լիմ անապատի վանահայր և Առաջ. Տեղ. Ս. Պօղոս Եպիսկոպոսի Մելիքեանց արդեամբ ժողովրդեանն »:

Գործ. Ժող. Արարք Եկեղեցւոյ

Արեւմտեայ

Արեւմտեայ

Նախագահ

10 Նոյ. 1885 ՅԱրարք ի վ.ան:

Խճագործութեան Արարչաց ամսագրի:

Վիճակիս եկեղեցական դասուց մեծագոյն մասի աղքատութիւնը և նոցա ընտանեաց ապագայում կրելու աննախանձելի վիճակն ունելով ինկատի՝ վստահանումս առաջարկել կարգակից եղբարցս, որ համաձայնեն ինձ հետ՝ առաջակայ 1886 թուականը, մեր զաւակաց վիճակն ապահովելու առաջին տարեկիցըն համարել, պարտաւորուելով հետզհետէ ամեն միւս մեզնից տարուայ ընթացքում ոչ պակաս տասն թուրլուց և ոչ տւելի 25 թուրլուց հասուցանել դորա համար յատկացեալ մի տեղ դանձելու, որը կարող է ապագայում ծառայել մեր ընտանեաց և զաւակաց օգտին (շահն), Կցանկայի, որ այս իմ անշօր ձայնը առաւել բացայայտ և հարուստ եղանակաւ հրատարակուի Արարատ ամսագրոյ էջերում, և եթէ հաճելի երևայ վիճակիս հոգևորականներին, սկսեալ քահանաներից մինչև զպիրներն անխտիր հաճէին իւրեանց կամքն յայտնել երկու տողով՝ պատուական լրագրութեանց միջոցով, որ մեր ամենիս խնամակալ ծայրագոյն Հայրապետը՝ լսելով մեր անյօգ ձայնը՝ ինքն ևս կրարեհաճի անշուշտ ուղղութիւն տալով ներկայ խնդրոյն տնօրինել զարժանն յօգուտ այժմեան և ապագայ որրոց և այրեաց եկեղեցականացս: Յայտնելով այժմէն իմ պատրաստականութիւնը աղօթումս, որ իրագործուի նուաստիս առաջարկութիւնը:

Ստեփաննոս Ժամանայ Կապուկէանց:

Ի 22 Դեկտեմ. 1885 թ.

Ախթալայի Կապուկէանց: